




Ագդարարույթեան Trumpet's Sound **փող**

53-րդ ՏԱՐԻ, ԱՄՏՐԱՆԻՎ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2022



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույունեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Կը խնդրենք աղօթել

- COVID-ով հիւանդ շատ մարդկանց համար,
- մանուկներու համար, ովքեր Աւետարանը լսելու կարիք ունին,
- Աստուծոյ խօսքի քարոզչութեան համար,
- Հայաստան մեկնող միսիոնարական խումբի ծառայութեան համար,
- Բեռնարկի ծառայութեան աշխատանքներու համար, որպէսզի այն օրհնութիւն ըլլայ շատերուն,
- կարիքաւոր ընտանիքներու համար,
- Հայաստանի խաղաղութեան համար,
- «Ազդարարութեան փող» թերթի օրհնաբեր ծառայութեան համար:

Բովանդակութիւն

Յաղթանակ մահուան նկատմամբ. **3**
Հովիւ Հրաչ Գույունեան

Եզիպտոսէն Քանան (4) **4**
Տոն Սրորմբր

Գոհունակ բորոտ մը. **7**
Քարոյած

Պետրոսը եւ հրեշտակը. **9**
Ռէքս Տիրլալ

Տերունական աղօթքը. **12**
Նէյլ Պուրման

Ծեր նաւապետի մը դարձը. **14**
Քարոյած

Աղքատները ամէն ատեն
ծեզի հետ ունիք **16**
ԱՍՄ

Կազմի նկարը՝ Նորավանք. 13-րդ դարի վանք, ACM, Յունուար 2015թ.:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Յաղթանակ մահուան նկատմամբ

«Հիմա ես կ'երթամ զիս դրկողին քով եւ ձեզմէ մէկն ալ չի հարցնէր ինծի թէ ո՞ր կ'երթաս: Բայց՝ որովհետեւ այս բաները ձեզի խօսեցայ, ձեր սրտերը տրտմութիւնով լեցուեցան: Բայց ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզի. Աղէկ է ձեզի, եթէ ես երթամ. քանզի եթէ ես չերթամ, Միսիթարիչը ձեզի չի գար. բայց եթէ երթամ, զանհկա ձեզի պիտի դրկեմ» (Յովհ. 16:5-7):

Կտաները դատարկ գերեզմանին մէջ են, քարը զլորուած է, բայց որտե՞ղ է Յիսուսը: Տէրն Իր աշակերտներուն հետ շատ անգամ խօսած էր Իր մահուան ու յարութեան մասին, սակայն Իր խօսքերը իմաստ ստացան միայն Իր յարութենէն ետք: Յարութիւնը յոյս եւ ուրախութիւն բերաւ աշակերտներուն: Անոնք հաւաքուեցան մէկտեղ, կարծես յաղթանակ մը կը տօնեն: Եւ իսկապէս, Քրիստոսը յաղթեց սատանային:

Բայց ի՞նչ ըսենք մեր մասին: Ի՞նչ օգուտ բերաւ յարութիւնը մեզ այսօր: Եթէ յարութիւն չ'ըլլար, ապա մեղքի թողութիւն եւ յոյս չէինք ունենար, սատանայի դէմ ոչ մէկ յաղթանակ չէր ըլլար, Սուրբ Հոգին չէր գար հաւատացեալներուն մէջ բնակելու համար, յաւիտենականութեան հեռանկարը անորոշ կ'ըլլար:

Ո՞րն է խստումը

«Եւ վկայութիւնը այս է, որ Աստուած մեզի յաւիտենական կեանք տուաւ ու այս կեանքը անոր Որդիին մէջն է: Ան որ Որդին ընդունած է՝ կեանք ունի եւ ան որ Աստուծոյ Որդին ընդունած չէ՝ կեանք չունի: Այս բաները գրեցի ձեզի՝ որպէս զի գիտնաք թէ յաւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ Որդիին անունին կը հաւատաք» (Ա Յովհ. 5:11-13):

Հարցս հետեւեալն է՝ դուն Որդին ունի՞ս, Յիսուսին ունի՞ս սրտիդ մէջ:

«Սրտերնիդ չխռովի. Աստուծոյ հաւատացէք, ինծի ալ հաւատացէք: Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ՝ ես ձեզի պիտի ըսէի՝ Հիմա կ'երթամ, որ ձեզի տեղ պատրաստեմ: Եւ եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն պիտի գամ եւ ձեզ քովս առնեմ, որպէս

զի ո՛ր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլլաք: Ո՛ր որ ես կ'երթամ՝ գիտէք ու ճամբան ալ գիտէք» (Յովհ. 14:1-4):

Աստուծոյ Եւ Յիսուսի Խոստումները մեզ համար այսօր:

Շնորհակալութիւն կը յայտնենք Տէրոջը մեր ունեցած հաւատքի եւ Իր տուած խոստումներու համար: Յարութիւնը մխիթարութիւն բերաւ մեր սրտերուն, ուրախութիւն՝ մեր կեանքին եւ յոյս, որը կ'օգնէ մեզ շարունակելու մեր ընթացքը եւ անհամբերութեամբ սպասել պայծառ ապագային:

Դուն նոյնպէս կրնաս ապաշխարութեամբ գալ եւ ստանալ ձրի փրկութիւնը՝ իմանալով, որ յաւիտենականութիւնդ Քրիստոսի հետ պիտի անցնես: Դուն նոյնպէս կրնաս յաղթանակ տանիլ մահուան նկատմամբ:

Շնորհաւոր բոլորիդ Սուրբ Զատիկը:

Հ. Գ.

Եզրիտոսէն Քանան (4)

Աստուած Իր Անձը կը բացայայտէ Մովսէսին (մաս 2)

Մեր նախորդ սերտողութեան մէջ իմացանք, որ Աստուած Իր Անձը Մովսէսին բացայայտեց, երբ վերջինս 40 տարի Մադիամու երկրին մէջ էր: Աստուած Մովսէսին յանձնարարեց Եզրիտոս վերադառնալ՝ իսրայէլցիներուն գերութենէն հանելու եւ Աւետեաց երկիրը տանելու համար: Մովսէսը պատճառաբանութիւններ առաջ քաշեց, որպէսզի չկատարէ Աստուծոյ պատուիրածը: Նախ ըսաւ. «Ես ո՞վ եմ»: Ան կը մատնանշէր իր անկարողութիւնը՝ այդ աշխատանքը կատարելու համար: Այնուհետեւ Մովսէսը հարցուց, թէ ի՞նչ պէտք է պատասխանէր անոնց, որոնք պիտի ուզէին գիտնալ այն Աստուծոյ անունը, որը զինք իրենց ուղարկած է: Աստուած ամբողջութեամբ պատասխանեց երկու պատճառաբանութիւններուն: Այս սերտողութեան մէջ պիտի քննարկենք Մովսէսի 3-րդ եւ 4-րդ արդարացումները:

Երրորդ արդարացումը. «Անոնք ինձի պիտի չհաւատան»

Մովսէսի երրորդ արդարացումն այն էր, որ ոչ ոք իրեն պիտի չհաւատար: Ծճմարիտ է այն, որ բոլորս ալ վախեր ունինք, թէ մարդիկ մեզ պիտի չհաւատան: Շատ քիչ են մարդիկ, որոնք պատրաստ են որեւէ հարցի համար հաստատ դիրք բռնել, նոյնիսկ երբ զգան, թէ իրենց դիրքորոշումի պատճառով ծաղրանքի ու նուաստացման պիտի արժանանան: Անոնք կ'ուզեն բացարձակապէս համոզուած ըլլալ իրենց հռչակած պատգամի ճշմարտացիութեան մէջ: Սակայն Մովսէսը սովորական իրավիճակի մէջ չէր: Աբրահամի Աստուածը զինք յատուկ պատգամ տուած էր: Արդեօ՞ք ան հաւատաց Աստուծոյ ըսածին, եւ եթէ հաւատաց, արդեօ՞ք կար որեւէ պատճառ, որ իսրայէլցիները չհաւատային Աստուծոյ ըսածին: Մենք կը զարմանանք, թէ ինչու Մովսէսը տուաւ այս հարցը:

Աստուած ողորմաբար Մովսէսին նշաններ տուաւ՝ ցոյց տալու համար, որ իր հետ խօսողը իսկապէս Աստուած է: Ասիկա անհրաժեշտ էր, որպէս նոր յայտնութեան ապացոյց: Նոր պատգամին ուղեկցող նշանները միակ կերպն է, որով կարող ենք վստահ ըլլալ, թէ այս պատգամը Աստուծմէ է:

Ո՞րն էր նշաններու բնոյթը, որոնք Մովսէս պէտք է ցոյց տար իր ժողովուրդին: Իր ձեռքի գաւազանին օձի վերածուիլը եւ այնուհետեւ դարձեալ գաւազանի վերածուիլը. Աստուած Մովսէսի միջոցով կը հաստատէր Իր պատգամը: Աստուած նաեւ նշաններ պիտի ըներ, որպէսզի ցոյց տար Իր գերակայութիւնը եգիպտացիներու աստուածներու նկատմամբ: Բորոտ ձեռքը, որը բժշկուեցաւ ցոյց տուաւ Աստուծոյ վերահսկողութիւնը մարդկային կեանքին վրայ: Այս երկու նշանները պիտի օգնէին իսրայէլցիներուն, ոչ թէ միայն Մովսէսին հաւատալու, այլ նաեւ՝ Աստուծոյ:

Արդեօ՞ք այս նշանները որեւէ այլ նշանակութիւն ունին: Այո: Եգիպտացիները մի քանի աստուածներու կ'երկրպագէին: Այս նշանները սկիզբն էին այն հրաշքներուն, որոնք Աստուած պիտի կատարէ իր Եգիպտոսի մէջ՝ Իր գերազանցութիւնը ցոյց տալու համար:

Չորրորդ արդարացումը. «Ես ճարտարախօս չեմ»

Արդեօ՞ք այս արդարացումով Մովսէսը պատճառ կը փնտռէր Աստու-

ծոյ համոզելու համար, որ ի վիճակի չէ նշանակուած առաջադրանքը կատարելու մէջ: Ակնյայտօրէն ան կը փորձէր խուսափիլ Աստուծոյ տուած յանձնարարութենէն: Այստեղ մի քանի հարց կ'առաջանայ: Արդեօ՞ք ինքն իրեն համապատասխան չէր տեսներ: Արդեօ՞ք կը յիշէր աւելի վաղ փորձառած մերժումը, երբ իրար հետ վիճաբանած իսրայէլցիները հարցուցին, թէ ով էր իրենց վրայ իրեն կառավարիչ կարգողը: Արդեօ՞ք փարաւունէն կը վախնար, չնայած որ Աստուած իրեն ըսած էր, թէ իր կեանքը փնտռողները արդեն մահացած են:

Հետաքրքրական է Տիրոջ՝ Մովսէսին տուած պատասխանը. ո՞վ մարդկանց կ'ընէ այնպիսին, ինչպիսին կան: Եւ Եթէ Աստուած է մեզ ստեղծողը, ուրեմն Ան կուտայ մեզ այն կարողութիւնը, որն անհրաժեշտ է կատարելու այն աշխատանքը, որը կ'ուզէ, որ մենք ընենք Իր համար:

Ինչպէ՞ս կ'արձագանքենք Աստուծոյ պատուիրաններուն: Արդեօ՞ք կը փորձենք խուսափիլ կատարելու այն, ինչ Ան կ'ուզէ, որ ընենք: Եթէ կայ բան մը որ կ'ուզէ, որ ընենք Իր համար, ապա նաեւ կուտայ այդ առաջադրանքը կատարելու կարողութիւնը:

«Այս պատգամը որո՞ւ ձեռքով դրկել կ'ուզես՝ դրկել»

Մովսէսը փարաւունին չներկայանալու եւս մէկ փորձ կատարեց: Ան Տիրոջը խնդրեց մէկ ուրիշին դրկել: Իրականութեան մէջ ան կ'ըսէր. «Ո՛վ Տէր, կը խնդրեմ ուրիշին դրկես»: Այսպէս ըսելով, ան բացայայտեց Աստուծոյ ըսածը չկատարելու իր ցանկութիւնը: Բայց հարցը, որին մենք պէտք է պատասխանենք, այն է, թէ արդեօ՞ք Աստուած կ'ուզէ մեզմէ այնպիսի բան մը ընել, որը չենք կրնար ընել: Մենք պէտք է յիշենք, որ Ան նաեւ կուտայ այդ աշխատանքը կատարելու կարողութիւնը:

Ճիշտ այդ պահին էր, որ Աստուած բարկացաւ Մովսէսի վրայ: Ասիկա երկու դէպքերէն առաջինն է, որ կը կարդանք, թէ Աստուած բարկացաւ Մովսէսի վրայ: Երկրորդը այն էր, երբ Մովսէսը ժայռին հարուածեց, փոխանակ խօսելու: Աստուած բարկացաւ երկու պատճառներու համար. հնազանդելու անպատրաստակամութեան եւ դիտաւորեալ անհնազանդութեան համար: Մենք պէտք է միշտ ուշադիր ըլլանք. քանի որ անհնազանդութիւնը երբեք չէ ընդունուած Աստուծոյ կողմէ:

Այնուամենայնիւ, Աստուած չ'արձակեց Մովսէսին այն գործէն, որուն

Ան կանչած էր: Ան մտադիր էր, որ Մովսէսը իսրայէլցիներուն Եգիպտոսէն դուրս հանէր: Սակայն ան պէտք է փարատնի առջեւ Աստուծոյ ներկայացնելու պատիւը կիսէր իր եղբօր՝ Ահարոնի հետ:

Գասեր մեզ համար

Մի քանի կարեւոր հարցեր կան, որոնց մասին պէտք է խորհրդածենք: Լաւ է գիտակցիլ մեր անկարողութիւններն ու թոյլ կողմերը, բայց մենք պէտք չէ մեր անհամապատասխանութիւնը կամ տկարութիւնը, որպէս պատրուակ օգտագործենք Տիրոջ պատուիրածը չկատարելու համար: Մենք պէտք է գիտակցինք, որ եթէ Աստուած մեզ առաջադրանք կուտայ, Ան նաեւ այն կատարելու զօրութիւնը կուտայ:

Եթէ ինքներս չկատարենք առաջադրանքը, Աստուած ունի մէկ ուրիշին, ով կը կատարէ ան, քանի որ Աստուծոյ գործը կը կատարուի: Բայց այդպէս մէկ ուրիշը կը ստանայ այն օրհնութիւնը, որը կուգայ Տիրոջը հնազանդելով:

Արդեօ՞ք պատրաստ ենք լիովին Տիրոջը ծառայելու:

Տոն Սթորմըր

Գոհունակ բորոտ մը

Երկու միսիոնար տիկիներ, Արեւմտեան Ափրիկէի Ivory Coast քաղաքին Bocada գիւղին մէջ հանդիպեցան թէրեզ անունով բորոտ կնոջ մը: Ան ձեռքերու փոխարէն կոշտացած կոճղեր ունէր: Տգեղ այլանդակ քիթ մը, եւ առանց մատներու հաշմանդամ ոտքեր: Սակայն դէմքը զարդարուած էր գեղեցիկ ժպիտով մը եւ փայլուն աչքերով: Ամէն Կիրակի առտու թէրեզ հաւատարմաբար կ'աւլէր պզտիկ եղեգնապատ եկեղեցւոյ ցեխոտ գետինը ուր զԱստուած կը պաշտէր կանոնաւորապէս: Մինչ կ'աշխատէր ան երբեք չէր զանգատեր, այլ փառաբանական երգեր կ'երգէր Աստուծոյ:

Օր մը միսիոնարուհիներէն մին՝ Պէթին լսեց այս բորոտ կնոջ պատ-

մութիւնը.- «Միշտ շատ տգեղ էի, ոչ ոք կ'ուզէր զիս» ըսաւ ան, «ուստի փողոցները կ'ապրէի ուր մարդիկ զիս կ'օգտագործէին: Բայց օր մը լսեցի Յիսուսի մասին, թէ որքան զիս կը սիրէր եւ սիրտս Անոր տուի: Յիսուս շատ բարի եղաւ ինծի: Ան ամուսին մը պարգեւեց եւ ապա պզտիկ տղայ զաւակ մը: Օր մը, մեր ընտանի կապիկը խածաւ տղէկս եւ յաջորդ օրը ձագուկս մեռաւ: Ա՛խ, որքան լացի: Օրերով չուզեցի ուտել կամ լուացուիլ, կրակի մօտ նստած միայն կուլայի: Ամուսինս փորձեց զիս մխիթարել, բայց զինք այնքան հեռու հրեցի որ ի վերջոյ ան զիս ձգեց: Քրիստոնէայ բարեկամներս փորձեցին օգնել, բայց մտիկ չըրին անոնց:

Ապա զիշեր մը երբ քնացած էի, զգացի որ մէկը կայնած էր կողքս: Վեր նայեցայ եւ տեսայ սպիտակ հագած արեւու պէս փայլուն անձ մը: Ան ինծի ըսաւ. «Թէրեզ, աղտոտ ցնցոտիներդ հանէ, եւ այս փայլուն սպիտակ նոր հագուստը հագիր որ քեզի համար բերած եմ»: Ուստի հնազանդեցայ, եւ ապա արթնցայ, Շատ լաւ կը զգայի կարծես ծանր բեռ մը ինկած էր կրնակէս: Անմիջապէս ճաշեցի եւ լոզցայ: Ապա մի-սիոնարական կեդրոն գացի ուր ձեզի հանդիպեցայ»:

Ճէնիս Թիմյան, որ այդ ժամանակ շատ սահուն կը խօսէր Պատու լեզուն, իր Աստուածաշունչը բացաւ Եսայեայ 61:1-ի եւ սկսաւ այդ համարը թարգմանել Թէրեզի սրտին խօսող լեզուով եւ ըսաւ. «Իմ սիրելի Թէրեզ, Աստուած քեզ այդքան կը սիրէ, որ քեզի խօսած է քնացած ատենդ: Զու երազիդ մեկնութիւնը կը գտնուի Աստուծոյ Խօսքին մէջ: Եսայեայ 61:3 կ'ըսէ թէ Աստուած Իր Միածին Որդին՝ Յիսուս Քրիստոսը դրկած է քեզ մխիթարելու ցաւիդ մէջ, «քեզի մոխիրի տեղ՝ փառք տալու, սուգի տեղ՝ ուրախութեան իւր, կոտրած հոգիի տեղ զո-վութեան պատմութեան տալու»»:

Թէրեզի սիրտը ուրախութեամբ ողորուեցաւ: «Ի՛նչ սքանչելի է որ Յիսուս զիս այսպէս կը մխիթարէ» ըսաւ եւ այս բոլորտ կիմը գոհունակութեամբ ու շնորհակալութեամբ լեցուն սրտով, սկսաւ ծափելով պարել եւ փառաբանական երգեր երգել իր Յիսուսին, մինչ երկու միսիոնարուհիները զինք կը դիտէին միաժամանակ խնդալով եւ լալով:

Քաղուած՝ «Աւետարներ ձիթենի» գիրքէն

Պետրոսը եւ հրեշտակը

Գործք Առաքելոց 12

Պետրոսին բանտին մէջ պահելու համար մեծ ջանքեր գործադրուեցին, եւ կը թուայ, թէ անկէ դուրս գալը անհնարին էր: Ան անցեալին մէջ բանտէն փախչելու փորձառութիւն ունեցած էր: Այս անգամ Հերովդէսը որոշած էր, որ Պետրոսն այլեւս պէտք չէ բանտէն փախչի, ուստի կրկնապատկեց պահակախումբը՝ չորս կարգ չորսական զինուորներ կարգելով: Բանտախուցին մէջ Պետրոսը նաեւ շղթայուած էր երկու զինուորներով, իսկ դռան առջեւ պահապաններ կը հսկէին: Հերովդէսը կ'ուզէր վստահ ըլլալ, որ այս անգամ ոչ մէկ հրաշք պիտի չկրնար փրկել Պետրոսին:

Հերովդէսը մեծ ընտանիքի մականունն էր: Հերովդէս անունը յայտնի էր Նոր Կտակարանի Ժամանակաշրջանին մէջ: Այս Հերովդէսը Հերովդէս Ագրիպպան էր: Իր մեծ հայրը՝ Հերովդէս Մեծը, իշխած էր Քրիստոսի ծննդեան ժամանակ եւ պատասխանատու էր մանուկներու սպանդի համար: Հերովդէս Ագրիպպայի հօրեղբայրը՝ Հերովդէս Անտիպասն էր, ով Յիսուսի դատապարտութիւնը վարեց: Հերովդէս Ագրիպպայի հայրը սպանուեցաւ իր հոր կողմէ: Տարբեր Հերովդէսներ սպանեցին իրենց կանանց ու զաւակներուն: Հերովդէսներէն մէկը, մահէն անմիջապէս առաջ, դիմեց Օգոստոս կայսրին՝ սեփական որդիին սպանելու թոյլտուութիւն ստանալու համար: Օգոստոս կայսրը նկատեց, որ աւելի լաւ է Հերովդէսի խոզը ըլլալ, քան՝ որդին:

Մինչ Պետրոսը բանտին մէջ էր «Եկեղեցին անդադար աղօթք կ'ընէր Աստուծոյ անոր համար» (հմբ 5): Յունարէն բնագրին մէջ «անդադար» բառը «ektenos» բառն է, որը կը նշանակէ՝ ձգտիլ նպատակին հասնելու համար: Դուկասը նոյն բառը կ'օգտագործէ Գեթսեմանի պարտէզին մէջ Յիսուսի աղերսաքին աղօթքը նկարագրելու համար (Դուկ. 22:44): Անդադար կամ ջերմեռանդութեամբ աղօթել չի նշանակէր, թէ Աստուած անտարբեր է մեր խնդրանքի նկատմամբ, եւ մենք պէտք է քրտնաջան աշխատինք զինք համոզելու համար: Ջերմեռանդութեամբ աղօթել կը նշանակէ գիտակցիլ, որ Աստուած մեծ փափագ ունի տեսնելու ինչ-որ գործողութեան իրականացում, որը մենք նոյնպէս կ'ուզենք տեսնել:

«Յանկարծ Տիրոջ հրեշտակը եկաւ քովը կայնեցաւ: Տանը մէջ լոյս մը ծագեցաւ: Հրեշտակը Պետրոսին կողը խթելով՝ արթնցուց զանիկա ու ըսաւ. «Շուտով ելի՛ր»» (հմբ 7):

Արդեօք իսկապէս կը հաւատա՞ք, որ Աստուած հրեշտակներ ունի որպէս գերբնական գործակալներ, որոնք կը շրջին մեր աշխարհի մէջ՝ իրենք իրենց ներգրաւելով մարդկանց կեանքէն ներս:

Այս իրադարձութիւնը արձանագրուած է յոյն բժիշկ Ղուկասի կողմէ: Ան գրած է ե՛ր Ղուկասի Աւետարանը ե՛ր Գործք Առաքելոց գիրքը: Այս գրքերը կարդալով կը նկատեք, որ Ղուկասը մանրութեանն ուշադրութիւն դարձնող պատմաբան է: Իր Աւետարանը կը սկսի մատնանշելով, թէ ինք ամէն ինչ ականատեսներու շրթունքով ստուգուած է: Իրեն չեն հետաքրքրէր ուրիշներու լսածները: Ղուկասի Աւետարանի բոլոր վայրերն ու թուականները, թագաւորներն ու կառավարիչները կը համապատասխանեն աշխարհիկ պատմութեան գրառումներուն: Անցեալ դարի ընթացքին շատ գիտնականներ թերահաւատօրէն կը վերաբերէին Ղուկասի գրութիւններուն: Թերահաւատ գիտնականներէն մէկը՝ սրբ Ուիլյամ Ռէմսին, լայնածաւալ ուսումնասիրութիւններ կատարեց Փոքր Ասիայի մէջ: Իր աշխատութեան ասարտին, որն ի սկզբանէ նախատեսուած էր Ղուկասի Աւետարանը հերքելու համար, հետեւեալը գրեց. «Ղուկասի պատմութիւնը անգերազանցելի է իր վստահելիութեան առումով»: Ուստի, մենք ունինք ճշգրիտ պատմաբան մը, որը կը յայտնէ մեզի, որ հրեշտակը Պետրոսին բանտէն դուրս հանեց: Իսկապէս կը հաւատա՞ք ասոր: Մարդիկ, ընդհանուր առմամբ, դէպքի մը եղելութիւնը կը հիմնաւորեն իրենց կեանքի փորձի վրայ.

- Եթէ այն իրենց փորձառութեանը կը համապատասխանէ, կը համաձայնին ըսելով թէ այդ դէպքը կրնայ տեղի ունենալ:
- Եթէ այն իրենց փորձառութեանը չի համապատասխանէր, ապա չեն համաձայնիր, եւ կ'ըսեն, թէ այդ դէպքը չի կրնար տեղի ունենալ:

Ահա պարզ լուսաբանում մը. Եսքիմացին Նիւ Եորք կ'այցելէ, երբ տուն կը վերադառնայ, ընկերները իրեն Նիւ Եորքի մասին հարցումներ կուտան: Ան կը պատմէ անոնց նաւահանգստի երկնասլաց շէնքերու եւ մեծ նաւերու մասին: Իր ընկերները չեն հաւատար իրեն ու կը ծաղրեն

զինք: Ասիկա իրենց փորձառածէն դուրս է: Աւելի ուշ երկրորդ Եսքիմացին կ'երթայ Նիւ Եորք ու կը տեսնէ քաղաքի նոյն հրաշալիքները: Տուն վերադառնալուն պէս ան կը յիշէ, թէ ինչ պատահած էր առաջին Եսքիմացիին հետ, ուստի կ'ըսէ. «Նիւ Եորքի մարդիկ մեզ մնան կ'ապրին ձիւնատներու մէջ եւ ամէն օր իրենց նաւակներով որսորդութիւն կ'ընեն»: Եւ ամբողջ ցեղը կը հաւատայ իրեն: Անոնք աւելի կը նախընտրեն հաւատալ սուտին, որը կը համապատասխանէ իրենց փորձառութեանը, քան ճշմարտութեանը, որը դուրս է իրենց փորձառութեանէն:

Պուկասը մեզ ճշմարտութիւնը կ'ըսէ, որը մեր փորձառութենէն դուրս է: Աստուած Իր ուզած ժամանակին եւ ձեռով կը ներգործէ մարդկանց կեանքերուն մէջ Իր հզօր հրեշտակներու միջոցով: Նկատեցէք հրեշտակի, Աստուծոյ զորութեան եւ Պետրոսի միջեւ եղած համագործակցութիւնը: Տեսէ՛ք, թէ ինչ ըրաւ հրեշտակը եւ ինչ ըրաւ Պետրոսը: Հրեշտակը Պետրոսին արթնցուց, որու հետեւանքով անոր շղթաները ընկան, ապահով զինք տարաւ պահակներու կողքով եւ բացաւ բանտի դուռը: Պետրոսը ոտքի ելաւ, հագաւ իր հանդերձանքը, հրեշտակի ետեւէն դուրս եկաւ բանտէն ու վերջապէս քալեց դէպի Մարիամի ու Յովհաննէս Մարկոսի տունը: Պետրոսը ըրաւ այն ամէնը ինչ կրնար ընել: Այն ամէնը, ինչ Պետրոսը չէր կրնար ընել Աստուծոյ զօրութիւնն ըրաւ:

Երբեւէ զգացա՞ծ էք, թէ շղթաներով կապուած էք: Այդ կապող շղթաները երբեմն մեղաւորութեան զգացումը, զայրոյթը կամ կախումաւորութիւնները կրնան ըլլալ: Նոյնիսկ ապագայի հանդէպ մտահոգութիւնը կրնայ կործանել այն ուրախութիւնն ու խաղաղութիւնը, որ Աստուած կ'ուզէ ձեզի տալ: Սիայն Աստուած կրնայ կտրել այդ շղթաները: Եթէ Իր զաւակն ես՝ Քրիստոսին որպէս Փրկիչ վստահելով, ապա Ան արդէն կտորած է այդ շղթաները: Այսօր Տիրոջ շատ զաւակներ չեն գիտէր, թէ ինչպիսի ազատութիւն ունին: Ինչպէս հրեշտակը Պետրոսին արթնցուց, Քրիստոսը նոյնպէս մեզի կ'ըսէ. «Արթնցէ՛ք, վայելէ՛ք այն ազատութիւնը, որը Ես ձեզի համար բերի»: Գիտակցէ՛ք, որ ազատ էք եւ քայլէ՛ք այդ ազատութեան մէջ: Ապրելու սկզբունքը պատկերուած է Պետրոսի փրկութեան այս հրաշալի պատմութեան մէջ:

Հաւատացեալները Մարիամի տանը հաւաքուած աղօթք կ'ընէին,

հաւանաբար Պետրոսի համար, մինչդէռ ան, որն այժմ ազատ արձակուած էր, կը թակէր տան դուռը: Այս քրիստոնեաները զարմացան իրեն տեսնելով: Անոնք չկրցան հաւատալ, որ Աստուած պատասխանած էր իրենց աղօթքներուն: Սա կը վկայէ այն մասին, որ իրականութեան մէջ մեծ հաւատք պէտք չէ, որ Աստուած մեր աղօթքներուն պատասխանէ: Երբեք մի՛ մտածէք, թէ բաւարար հաւատք չունիք: Այս եկեղեցին մեծ հաւատք չունէր, անոնք մեծ Աստուծոյ հանդէպ փոքր հաւատք ունէին, եւ ճիշտ ասոր մէջ կը կայանայ աղօթքի զօրութիւնը:

Երբ կը ճանչնանք այս զարմանահրաշ Աստուծոյն, ով կենդանի է ու կը գործէ մինչ օրս, մենք կեանքին նոր տեսանկիւնէ կը սկսինք նայիլ: Նոյնիսկ կեանքի գլուխկոտրուկները, օրինակ՝ երբ մարդ մը կը մահանայ, իսկ միւսը կը ծնի, կը սկսին ուրիշ տեսանկիւնէ ընկալուիլ: Մենք չենք ստանար բոլոր պատասխանները, բայց աւելի գոհունակ կը դառնանք եւ կ'ընդունինք կատարուած առեղծուածի հետ ապրիլ, քանի որ կը ճանչնանք ու կը վստահինք այն Աստուծոյ, ով այդ առեղծուածի ետին կանգնած է:

Ռէքս Տիրլալ

Տէրունական աղօթքը

«Տէրունական աղօթք»-ը Տէրը երբեւէ չէ աղօթած: Ան ներում խընդրելու կարիք չունէր, քանի որ մեղք չունի: Եթէ սա Տէրոջ աղօթքը չէ, ապա որո՞ւ աղօթքն է: Այս հարցին պատասխանելու համար եկէ՛ք ուրիշ հարցում մը առաջ քաշենք. «Ո՞վ կրնայ աղօթել այս աղօթքը»:

Այն կը սկսի «Ով Հայր մեր որ երկինքն ես...» խօսքերով: Այն անձը, ով անկեղծութեամբ եւ հասկնալով կ'աղօթէ այս խօսքերը, պէտք է իմանայ, որ կը պատկանի մարդկանց այն խումբին, ովքեր ծնած են Սուրբ Հոգիէն Աստուծոյ ընտանիքին մէջ: Յաջորդող խօսքերէն կը հասկնանք, որ այս մարդկանց սրտերուն մէջ Աստուծոյ հանդէպ անսովոր փափագ մը կայ:

«Քու անունդ սուրբ ըլլայ»: Երկիւղ, ակնածանք, պատիւ, սէր. այս բառերը կը բնութագրեն այս մարդկանց զգացումները, ովքեր Աստուծոյն, որպէս Հայր ընդունած են: Անոնք այս մեծ արտօնութեանը թե-

թելութեամբ չեն վերաբերիր:

«Քու թագաւորութիւնդ գայ»: Եկո՛ւր ու վե՛րջ տուր մեղքին եւ մարդու իշխանութեանը:

«Քու կամքդ ըլլայ ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ»: Բողոքիս համար աւելի լաւ բան չկայ, քան Աստուծոյ կամքի կատարումը: Անոր իմաստութիւնը մեր լաւագոյն եւ միակ ապահով ուղեցոյցն է:

Ո՞վ կրնայ այսպէս աղօթել: Ան, ով իր կեանքը յանձնած է Տէր Յիսուսին եւ ով որոշած է Իրեն հետեւիլ իր կեանքի բոլոր օրերուն մէջ, անկախ թէ տարիները ինչ կը բերեն: Շատերը կը փափագին նման կեանքով ապրիլ, բայց կ'ըսեն, թէ իրենք բաւարար գօրութիւն չունին, կամ բաւարար խելացի ու բարի չեն: Երբ նման արտայայտութիւններ կը լսենք, մենք կը ժպտանք ու կը պատասխանենք ըսելով. «Լսե՛ք այս մարդու աղօթքի շարունակութիւնը»:

«Մեր ամէն օրուան հացը այսօր ալ մեզի տուր»: Տէր Յիսուսի աշակերտներն ամէն օր Իր հոգատարութեան կարիքն ունին: Անոնք իրենց բոլոր պէտքերուն համար կը սորվին ամէն օր Իրեն վստահիլ: Յաջորդ օրը նոյնը կ'ընեն:

«Մեզի ներէ մեր պարտքերը ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն»: Ո՞վ կրնայ առանց սայթաքելու ապրիլ: Մենք Աստուծոյ պարտական ենք մեր ամբողջ սրտով եւ հնազանդութեամբ, բայց յաճախ մենք Իրեն չենք տար այն, ինչ պարտաւոր ենք: Մենք օրեցօր կը փնտռենք Անոր ներումը, որը ձրիապէս եւ առատապէս կուտայ: Մենք նոյն ներումը կը յայտնենք մեր շուրջը գտնուողներուն:

«Ու մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ»: Ես պիտի հետեւիմ Քեզ, ուր ալ որ տանիս, Տէր, բայց ես ուժ չունիմ, ես կը վախնամ իմ տկարութենէս, երբ հանդիպիմ այս կեանքի փորձութիւններուն: Ես կը վստահիմ Քեզ, Հա՛յր, որ ազատես զիս ինչպէս շրջապատող չարէն, այնպէս ալ ներսս գտնուող չարէն:

Ուրեմն ո՞վ կրնայ աղօթել այս աղօթքը: Տէր Յիսուսի աշակերտները, անոնք ուժեղ, խելացի կամ բարի չեն, բայց անոնք Փրկիչ մը ունին, ով Իր մահով հաշտեցուց զանոնք Աստուծոյ հետ, եւ անոնք կառչած են Իրեն:

Հետեւաբար եկէ՛ք այս աղօթքի խօսքերը առանց հասկնալու չարտասանենք, այլ աղօթենք որպէս ճշմարիտ աշակերտներ՝ աճելով շնորհքի եւ մեր Տէր Յիսուսի գիտութեան մէջ:

Նէյլ Պուքման

Ծեր նաւապետի մը դարձը

Ծեր նաւապետ մը իր կեանքին վերջին ճամբորդութիւնն էր որ կ'ընէր: Ան տարիքը առած նաւագ մը ըլլալուն՝ հանգստեան կոչուած էր: Սակայն անողորք հիւանդութիւն մը ծերերու եւ անկարող նաւագներու յատկացուած անկելանոցին մէջ անկողին գամած էր գայն: Ան, ծովու կեանքին վարժուած շատերուն պէս՝ նախապաշարումներ ունեցող մէկն էր եւ կատարեալ՝ անհաւատ մը:

Եկեղեցիի մը բարեպաշտ հովիւը, որ հոգիները կը սիրէր ու կը փրճուէր զանոնք, օր մը այցելեց այս մարդուն եւ անոր խօսեցաւ Աստուծոյ սիրոյն, Քրիստոսով եղած ճրի փրկութեան, յաւիտեանական կեանքի եւ երջանիկ յոյսի մասին, որ անխտիր բոլոր մարդկութեան համար է:

- Ես հաւատք չունիմ եւ Սուրբ Գրքին չեմ հաւատար, - ըսաւ ծեր նաւապետը:

- Կրնա՞ս ըսել թէ ինչ բանին է որ չես հաւատար, - հարցուց հովիւը, անոր կասկածները լուսաբանելու նպատակաւ:

- Չեմ գիտեր, խոստովանեցաւ մարդը:

- Ուրեմն, ահաւասիկ քեզի կուտամ Յովհաննո Աւետարան մը եւ կարմիր մատիտ մը, ա՛ն եւ կարդա՛ գայն: Երբ կը հանդիպիս այդպիսի բաներու գոր չես հասկնար կամ չես հաւատար, անոնց տակերը կարմիր գիծով մը նշան ըրէ, երբ վաղը դարձեալ գամ քեզ այցելելու՝ անոնց մասին կը խօսակցինք:

Յաջորդ օրը, երբ Աստուծոյ ծառան ներս կը մտնէ, կը նշմարէ որ մարդը օրէ օր աւելի կը տկարանայ: Ժպիտով մը կը մօտենայ անոր եւ մի քանի սիրալիր խօսքեր փոխանակելէ յետոյ կը հարցնէ.

- Կարդացած հատուածիդ մէջ արդեօք հանդիպեցա՞ք ոեւէ բանի մը, որ չէք հասկնար կամ չէք կրնար հաւատալ:

Նաւապետը բռնագբօսիկ ժպիտով մը, իբրեւ ժխտականի նշան՝ գլուխը կը շարժէ: Մի բանի օրեր այս բանը այսպէս կը շարունակուի:

Առաւօտ մը, երբ երէցը ներս կը մտնէ զայն այցելելու ու անոր հետ խօսակցելու իր հոգիի փրկութեան մասին, կը տեսնէ որ պառկած անկողինը պարապ էր: Ան, կեանքի ովկիանոսէն իր վերջին ճամբորդութիւնը ընելով՝ իր անցեալը ետին թողած, յաւիտենականութեան անցած էր: Հովիւը մտահոգ ու յուսախաբ եղաւ այն բանին համար որ պատեհութիւն մը եւս չունեցաւ խօսելու մարդուն՝ իր ապաշխարութեանը վրայով:

Յանկարծ, աչքին կը զարնէ անկողինին քովը գտնուող պզտիկ սեղանին վրայի իր տուած Յովհաննու Աւետարանը: Կը վերցնէ եւ հետաքրքրութեամբ կը սկսի թղթատել զայն: Առաջին գլուխը կը բանայ եւ ոչ մէկ նշանի չի հանդիպիր: Կը դարձնէ երկրորդ գլուխը եւ դարձեալ կարմիր նշանի չի հանդիպիր հոն եւս: Երբ երրորդ գլուխը կը բանայ եւ համարներուն վրայէն աչք կ'անցնէ, կը նշմարէ որ 16-րդ համարը կարմիր գիծէ շրջանակի մը մէջ առնուած է. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ Անոր հաւատայ, չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ», եւ լուսանցքին մէջ, անճոռնի գիրերով գրուած, եւ սակայն խիստ նշանակալից հետեւեալ խօսքերը կը կարդացուէր. «Խարիսխս ապահով նաւահանգիստ մը նետեցի»: Ի տես ասոր, երէցին դէմքը ուրախութենէն սկսած էր փայլիլ, որովհետեւ անմահ ու թանկագին հոգի մը Փրկչին կրցած էր առաջնորդել:

Ծերունի նաւապետը, իր կեանքին վերջին ժամերուն, Աստուծոյ Խօսքին յոյսովը կարող եղած էր յաւիտենական կեանքի մեծագոյն ապահովութիւնը ձեռք ձգել ու նաեւ հոս երջանիկ ու փառաւոր յոյսով մը իր աչքերը գոցել Երկինքի մէջ բանալու հաստատ հաւատքով ու համոզումով:

Միբելի՛ անապաշխար հոգի, աշխարհի մէջ Քրիստոսէ զատ ուրիշ ոեւէ տեղ եւ ոեւէ մէկը մեզի չի կրնար այս յոյսը ներշնչել: Ուրեմն դիմէ Անոր, Ան է միայն ապահով ու վստահելի խարիսխը քու ներկայ եւ ապագայ կեանքիդ համար:

Աղքատները ամէն ատեն ձեզի հետ ունիք

Հայաստանի մէջ ծառայելու մեր գլխաւոր նպատակը աղքատներուն եւ կարիքաւորներուն Աւետարանը հասցնելն է: Տէր Յիսուս ըսաւ. «Վասն զի աղքատները ամէն ատեն ձեզի հետ ունիք» (Մատթ. 26:11):

Ամենադժուար պարագաներէն մէկն այն է, երբ հրատապ կարիք կ'ըլլայ, սակայն բաւարար միջոցներ չեն գտնուիր այդ կարիքները հոգալու համար: Ծանր է հիւանդին, սովածին ու ձմեռուայ վառելիք չունեցողին ըսել «Ոչ»: Ասիկա բառ մըն է, որու հետ երկար պայքարած են, մինչեւ որ Տէրը ստրվեցուց ինծի, որ ես Աստուած չեմ:

Կարիքաւորներէն շատ բան ունինք ստրվելու: Անոնք կ'ապրին չիմանալով, թէ իրենց սնունդը ուրկէ պիտի հայթայթեն: Անոնք կը ստրվին իրենց բոլոր կարիքներու համար Աստուծոյ վստահիլ:

Քազմաբնակարան շէնքի 3-րդ յարկին վրայ Մարիան կ'ապրէր իր որդիի հետ, ով հոգեկան խանգարում ունէր: Մարիան երկու ոտքերէն անդամաւոյժ էր: Իր մահճակալը ներքնակ չունէր, ան կը քնանար մետաղեայ զսպանակներու վրայ: Ան գրեթէ մերկ էր, քանի որ այդ կերպ ան կրնար իր պէտքերը հոգալ՝ մահճակալի տակ գտնուող դոյլին միջոցով: Հետեւաբար շէնք ներս մտնելը անտանելի էր, իսկ դրացիները միշտ կը բողոքէին:

Ան լսած էր, որ ես նոյնպէս առողջութեան հետ խնդիրներ ունիմ: Օր մը, երբ զինք այցելեցի, անմիջապէս զիս տեսնելուն պէս ըսաւ. «Ես կ'աղօթէի քեզի համար»: Այս խօսքերը հասան մինչեւ սրտիս խորքերը, ես երբեք պիտի չմոռնամ անոր դժմքին արտայայտութիւնը:

Այնքան քաջալերական էր տեսնել Տէրոջ հանդէպ իր ունեցած յոյսն ու հաւատքը: Այդ խօսքը լսելուն պէս առաջին բանը որ մտքէս անցաւ սա էր. «Ինչպէ՞ս կրնար ան մտածել իմ մասին եւ աղօթել ինծի համար, երբ ինք նման դժուարութիւններու մէջէն կ'անցնի»:

Այո՛, աղքատները ամէն ատեն մեզի հետ են, եւ մենք պէտք է հոգ տանինք իրենց մասին ու մխիթարենք զիրենք իրենց նեղութեան ժամանակ: